13381

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«03» 12 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 276 - 25

Նախաձեռնող՝ *«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ*
Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Ա.Մանուկյան 15

Գործունեությունը՝ *Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի Թատերական փողոց 3ա հասցեում Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքի կառուցում*
Լոռու մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 276 - 25
«03» դեկտեմբեր 2025թ.

Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի Թատերական փողոց 3ա հասցեում նախատեսվող Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Վանաձոր համայնք, Վանաձոր բնակավայր, Թատերական փողոց 3ա

Ներածական մաս. «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող թատրոնի շենքը կառուցվելու է սեփականության իրավունքով Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ-ին պատկանող հողամասում, որը գտնվում է Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի Թատերական փողոց 3ա հասցեում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ № 23052012-06-0174 /ծածկագիրը՝ 06-001-0004-0009/, Վանաձորի համայնքապետարանի կողմից 19.09.2025թ.-ին տրված № ՆԹ-8411-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման:

Նկարագրական մաս. Նախատեսվող թատրոնի շենքը կառուցվելու է Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ-ին պատկանող հողամասում, որը գտնվում է Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի Թատերական փողոց 3ա հասցեում: Տարածքի ընդհանուր մակերսը կազմում 3846 մ^2:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն

հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Այն գտնվում է Վանաձոր բնակավայրի կենտրոնական մասում՝ համայնքապետարանից մոտ 700 մ դեպի արևելք, հյուսիսից 7,0-10,6 մ հեռավորության վրա Քարհանյանի անվան դպրոցի տարածքն է, հարավից՝ հրապարակը, կենտրոնական մասում Հ. Աբելյանի արձանն է, Թումո կենտրոնի շենքը, նախկին Սպայի տունը, արևմուտքից՝ Թատերական փողոցն է՝ բազմաբնակարան բնակելի շենքերով, արևելքից՝ շինության բակային տարածքն է: Նախատեսավող գործունեության տարածքում գոյություն ունեցող կառույցներն են՝ Հ. Աբելյանի անվան դրամատիկական թատրոնը (քանդվող), շենքի հետևի ճակատին կից ավտոտնակը (114.0 մ^2, քանդվող) , կաթսայատունը՝ (34,0 մ^2, քանդվող), օժանդակ շինություն (14,0 մ^2, քանդվող), էլեկտրական ենթակայան (56.0 մ^2, պահպանվող), ջրավազան՝ քանդվող, տաղավար՝ քանդվող: Նոր կառուցվող շինության տեղակայման սկզբունքը՝ հաշվարկված է ֆունկցիոնալ, ճարտարապետական ու ինսոլյացիոն պահանջներով, դիմացի ճակատի գլխավոր մուտքային հատվածի պահպանման հաշվին, տեղակապման հստակ սահմանագծով: Նոր կառուցվող շենքերն են՝ կաթսայատան շենք - 24,0 մ^2, հարթակ - 30,0 մ^2), շենքից և էլեկտրակայանից 15,0 մ հեռավորության վրա, մեկ վերգետնյա հարկով, արտաքին պատերը երեսապատված բազալտե սալիկներով, արտաքին չափեր՝ 6.0 x 4.0 մ: Բացօթյա ամֆիթատրոն բակային հատվածում:

Թատրոնի ճարտարապետական մասը ձևավորված է ժամանակակից ուղղությամբ՝ ընդգծված ճակատային կառուցվածքով, շեշտված բեմի ծավալով, բաց մուտքային տարածքներով և ընդարձակ ֆոյեով: Ընդհանուր ծավալը բաղկացած է մի քանի բլոկներից՝ հանդիսատեսի դահլիճ, բեմ և բեմի հետևի տեխնիկական գոտի, ադմինիստրատիվ և օժանդակ տարածքներ, ինչպես նաև արտիստների սենյակներ ու վերելակային հաղորդակցում: Շենքի հատակագծային կազմակերպումն ունի համաչափ և հստակ բաժանում՝ ըստ ֆունկցիոնալ գոտիների՝ ելնելով տրոֆիկայի, հոսքերի տարանջատման և անվտանգության պահանջներից: Թատրոնի տեղակայման տարածքը գտնվում է Վանաձորի կենտրոնական հատվածում՝ հասարակական կառուցապատման համար նախատեսված հողամասում, որն արդեն ենթարկված է մարդածին ազդեցության: Ներկայումս տարածքում առկա են ապամոնտաժման ենթակա հին շինություններ, իսկ նոր կառուցապատումն իրականացվելու է ներկայիս ճակատային գծերի պահպանումով, տարածքի բարեկարգմամբ և կանաչապատմամբ:

Դահլիճը նախատեսված է մոտավորապես 400 հանդիսատեսի համար, ապահովված է հաշմանդամ անձանց հասանելիությամբ՝ ըստ ՀՀՇՆ 2.05.02-2006 նորմերի:
Նստատեղերի դասավորվածությունն ու պատերի ձայնամեկուսիչ հարդարումը մշակված են ակուստիկ մասնագետների խորհրդով՝ ապահովելով բարձրակարգ լսողական պայմաններ՝ խոսքի, երգի և նվագախմբի ելույթների համար: Բեմը նախագծված է բազմաշերտ՝ պրոֆեսիոնալ թատերական գործունեության համար, պարունակում է բեմի վերին մասը՝ տեխնիկական լարերի, լուսային գարշակի և ձայնային համակարգերի ամրացման համար: Բեմի ետնամասում նախատեսված են դեկորների պահեստներ՝ առնվազն 6 մ բարձրությամբ, լայնությամբ՝ հարմարեցված տարբեր ձևաչափի դեկորների կցորդման և տեղափոխման պահանջներին: Շենքը երեք հարկանի է՝ ստորգետնյա հարկով, որտեղ տեղակայված են կենցաղային, ինժեներական և պահեստային տարածքներ: Յուրաքանչյուր հարկ ունի հստակ ֆունկցիոնալ կառուցվածք:

Նկուղային հարկում նախատեսված է երկու նիշ, դեֆորմացիոն կարից այն կողմ դեպի շենքի ետնամաս նախատեսված է 5 և ավել մ բարձրություն, ընդարձակ պահեստների և պահեստներում գույքի մատչելի տեղաշարժի և պահմապնման համար: Նախատեսված են սենյակներ պտտվող բեմի և բարձրացող իջնող բեմի համար մեխանիզմ և դրանց սպասարկող սենյակներ, բարձր դեկորերի տեղափոխումը նախատեսվում է իրականացնել պահեստում առկա բեռնատար վերելակով և բարձրացող իջնոց բեմով, անիջապես դեկորը բարձրացվում է բեմ:

Առկա են նաև տեխնիկական այլ սենյակներ ինժեներական ենթակառուցվածքների և ճիշտ միացումների համար:

Առաջին հարկում՝ մուտքային նախասրահ-ճեմասրահն է, կից տոմսարկղով և օժանդակ երկրորդային մուտքով, առաստաղն ունի կոր, ընդարձակ բացվածք՝ մինչև երկրորդ հարկի առաստաղ, երկու հարկի չափով, երկու կողմից նկուղ իջնող աստիճաններով, դիմացից դեպի դահլիճ տանող աստիճաններով՝ 1,2 մ բարձրությամբ, որը բաժանվում է այդ նիշում երկու մասի և կորությամբ բարձրանում է երկրորդ հարկի օթյակներ: Երկու կողմից միջանցքները տանում են դեպի բեմ, և բեմին սպասարկող սենյակների գոտի՝ արդեն ոչ հասանելի հանդիսատեսի համար: Շենքի հետևի կողմից նախատեսվում է աշխատակիցների մուտքն առանձին միջանցքով, երկու աստիճանավանդակներով կապված երկրորդ հարկի գրիմանոցների և երրորդ հարկի վարչական մասի սենյակներին:

Երկրորդ հարկում՝ նախատեսված են կոր բացվածքի երկու անկյունային մասում ցուցասրահ, մուտքեր դեպի օթյակներ, երկու կողմի աստիճաններով բարձրանում է երրոդ հարկի 100 հանդիսատեսի համար նախատեսված դահլիճի նախասրահ և դահլիճ: Շենքի մյուս հատվածում տեղակայված են գրիմանոցներն՝ իրենց սանհանգուցներով և լվացարաններով, որոնք երկու աստիճանավանդակներով կապվում են առաջին հարկի բեմին սպասարկող բոլոր սենյակներ:

Երրոդ հարկում նախատեսված է 100 հոգանոց դահլիճն՝ իր նախասրահով: Նախասրահում լինելու են հանդիսատեսի համար սանհանգույցներ, տերասսա, դերասանների անցման գոտին: Այս հարկում լինելու է տնօրենի սենյակ՝ ընդունարանով, արխիվով և հանգստի սենյակով, վարչական մասի աշխատակիցների սենյակներ, փորձասենյակներ, հագուստի հանդերձարան, սանհանգույցներ աշխատակիցների համար, դեպի բեմի վերին հատված մետաղական կարկասով անցուղիների մուտք դարպասներով:

Տանիքում/վերնահարկում՝ օդափոխիչների հանգույցների տեխնիկական գոտի:

Թատրոնի շենքը նախագծվել է՝ հաշվի առնելով բոլոր շենքաֆիզիկական գործոնները՝ ջերմամեկուսացում, ձայնամեկուսացում, բնական լուսավորություն, օդափոխություն և էներգաարդյունավետություն: Օդափոխման համակարգը համակցված է՝ բնական օդափոխությունը լրացվում է մեխանիկական շարժիչներով՝ ապահովելով անհրաժեշտ օդափոխման ծավալ թե՛ դահլիճում, թե՛ փակ տարածքներում: Ջեռուցումը կատարվելու է սեփական կաթսայատնից, որը նախագծված է բացարձակապես անվտանգ՝ արտանետումների հսկողությամբ և պահեստային տարբերակով: Շենքը հարմարեցված է բոլոր օգտվողների խմբերի համար՝ հաշմանդամություն ունեցող անձանց շարժման ուղիներ, հարթակներ, հատուկ սանհանգույցներ, ինչպես նաև տեսողության և լսողության խանգարումներ ունեցողների հասանելիություն: Բացի դրանից, ներառված է նաև երեխաների համար նախատեսված հատուկ գործունեության փոքր սրահ, որը կարող է ծառայել նաև կրթական ծրագրերի իրականացման նպատակով:

Հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքում նկուղային հարկն ունի երկակի նշանակություն և անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց:

Նախատեսվող գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 3846,0 մ^2,
- կառուցապատման մակերես՝ 1978,0 մ^2 (թատրոնի շենք, ներառյալ աստիճանահարթակներ և թեքահարթակներ՝ 1900,0 մ^2 + կաթսայատուն՝ 30,0 մ^2 + ստորգետնյա ռեզերվուար՝ 48,0 մ^2),
- ընդհանուր մակերես՝ 6,950,0 մ^2,
- օգտակար մակերես՝ 6,045,0 մ^2,
- բարեկարգում (հարթակներ, ոչ ջրաթափանց մակերեսներ, ավտոկայանատեղի, բացօթյա ամֆիթատրոն)՝ 1288 մ^2,

- կանաչապատում՝ 580 մ²,
- շինարարական ծավալ, (ներառյալ նկուղային հարկ) - 80,000 մ²:

Քանի որ թատրոնն արդեն իսկ ունի ջրամատակարարման և ջրահեռացման անհրաժեշտ ենթակառուցվածքային բոլոր պայմանները, իսկ համայնքի կողմից տրամադրված ՃՏԱ-ում նոր տեխնիկական պայմանի ստացման անհրաժեշտություն չկա, մինչև շինարարական աշխատանքների սկիզբը «Վեոլիա Ջուր» ընկերության հետ կնքվելու է նոր պայմանագիր և վերսկսվելու է ջրամատակարարումը ու կշարունակի գործել կոյուղին:

Նախատեսվող թատրոնի շենքի էլեկտրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կազմելու է 10982,9 մ³, որից հետլիցք՝ 10700 մ³, ավելցուկային հողային զանգվածը տեղափոխվելու է համայնքի հետ համաձայնեցված վայր: Նախատեսվող գործունեության իրականացման շրջանակներում իրականացվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, որի արդյունքնում ներկայացվող տարածքի որոշակի մասը պատված կլինի թարմ ծառաթփային բուսականությամբ: Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել մոտ 25 ծառերի հատում, որոնցից՝ 10 ընկուզենի, 5 խնձորենի, 5 տանձենի, 1 եղևնի, 1 ուռենի և 3 տուաներ: Հատված ծառերի փոխարեն տնկվելու են մի քանի անգամ ավելի շատ ծառեր: Նախատեսվում է թատրոնի տարածք բերել մոտ 119 մ³ բուսահող և իրականացնել սիզամարգերում բուսահողի փռում, h=20 սմ, հարթեցում և սերմերի ցանում՝ 595 մ³ ծավալով:

Նախատեսված գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով՝ նախատեսվում է շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր բացասական ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվելու են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավվում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների համապատասխան խլացուցիչներով ապահովվում և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շինարարական հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում՝ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռքբերում լիցենզավորված մատակարարներից՝ ներառյալ բետոնաշաղախը՝ մոտակա հանգույցներից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենասարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ՝ ներառյալ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 690 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից, Վանաձորի համայնքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք

առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
6. Նախատեսվող գործունեության տարածքում աշխատանքներն իրականացնել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ին «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,
7. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների հայտնաբերման դեպքում՝ դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել լիազոր մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի Թատերական փողոց 3ա հասցեում նախատեսվող Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Հովակիմ Ֆրունզիկյան